ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Bowers Wilkins LTD-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	դիզել գեներատոր	դիզել գեներատոր	դիզել գեներատոր	Արդյունաբերական դիզելային գեներատորը նախատեսված է բարձր հզորության էլեկտրամատակարարման ապահովման համար, ինչը հնարավորություն է տալիս այն կիրառել տարբեր արդյունաբերական և կոմերցիոն ոլորտներում: Այն ապահովում է կայուն և անխափան աշխատանք՝ օպտիմալ կատարողականությամբ և արդյունավետությամբ: Սարքավորման աշխատանքային հզորությունը կազմում է առնվազն 1000 kVA (800 կՎտ): Գեներատորի վառելիքի մատակարարման համակարգը ինժեկտորային է, մեխանիկական կառավարմամբ: Լիակատար (100%) բեռնվածության դեպքում վառելիքի ծախսը կազմում է առավելագույնը 250 լիտր/ժամ : Գեներատորը հագեցած է առնվազն 140 լիտր յուղի և 230 լիտր հովացման ջրի տարողունակությամբ, ինչը

				թույլ է տալիս սարքին աշխատել երկար ժամանակ առանց լրացուցիչ միջամտության։ Վառելիքի բաքի տարողությունը պետք է լինի առնվազն 1000 լիտր։ Վառելիքի բակը կարող է լինել ինչպես արտաքին այնպես էլ ներքին տեղակայմամբ։ Մարտկոցների համակարգը ներառում է առնվազն 400 Ա հոսանք և ապահովում է 24Վ մուտքային լարում։ Գեներատորից ելքային լարումը կազմում է 230/400Վ՝ 50 Հg հաճախականությամբ։ Լարման ավտոմատ կարգավորումը գործում է 0.5±% ճշգրտությամբ՝ ապահովելով անվտանգ և կայուն էլեկտրամատակարարում։ Գեներատորի պաշտպանվածության աստիճանը առնվազն IP23/H է (IP23/H նշանակում է, որ գեներատորը պաշտպանված է մեծ օտար առարկաների և թեք անկյան տակ ընկնող ջրի կաթիլների ներթափանցումից, իսկ նրա էլեկտրամոնտաժային բաղադրիչները դիմակայուն են մինչև 180°C ջերմաստիճանին), ինչը թույլ է տալիս սարքին աշխատել տարբեր կլիմայական պայմաններում։ Այն ապահովված է Self-alert անվտանգության համակարգով, որն ապահովում է վթարային իրավիճակների արագ արձագանք։ ՕԳԳ-ն (օգտակար գործողության գործակիցը) առնվազն 92% է՝ ինչը բարձր արդյունավետության ցուցանիշ է։ Սարքը ներկառուցված է AVR համակարգով (PAM), որը թույլ է տալիս գծերի ավտոմատ կարգավորում։ Տեխնիկական չափերն են՝ • Քաշը առավելագույնը 15000 կգ • Ակտիվ հզորությունը՝ առնվազն 1320 kVA • Աշխատանքային ակտիվ հզորությունը՝ առնվազն 1250 kVA • Հզորության

				գործակիցը՝ առնվազն 0.8 Cosφ Գեներատորը պետք է լինի նոր, գործարանային փաթեթավորմամբ, և տրամադրվի 1 տարվա երաշխիքով կամ 600 մոտոժամ անսահմանափակ երաշխիքային և ետերաշխիքային սպասարկումով: Տեղադրումը, մոնտաժը և ապամոնտաժումը պետք է իրականացվի Մատակարարի կողմից: Մոնտաժման համար անհրաժեշտ մալուխների և այլ միջոցների գնահատումը պետք է իրականացվի մատակարարի կողմից և ներառվի աշխատանքների մեջ: Մատակարարման ժամկետը՝ 25-30 աշխատանքային օր: Գեներատորի տեղադրումը համարվում է ավարտված այն ընդհանուր ցանցին միացնելուց և թեստավորելուց հետո: Թեստավորելուց հետո մատակարարը տրամադրում է պաշտոնական գրություն գեներատորի աշխատանքային պատրաստ վիճակում լինելու մասին, որից հետո գեներատորը մտնում է երաշխիքի փուլ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Bowers Wilkins LTD в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
1				